Ալաշկերտ համայնքի ղեկավարի 2013 թվականի 1-ին կիսամյակի

ՀԱՇՎ ԵՏՎՈՒԹ ՅՈՒՆ

Գ. Ալաշկերտ 03.07.2013թ.

Ալաշկերտ համայնքը ունենալով խաղողագործության և պտղաբուծության ուղղվածություն այս տարվա առաջին կիսամյակը ոչ բարենպաստ էր ուղատնտեսության համար: 2013 թվականի մայիսի 12-ի աննախադեպ արկտահարությունը 100%-ով վնաս հասցրեց համայնքի ողասեփականատերերին: Բնակչությունը զրկվեց իր ապրուստի հիմնական իջոցից: Չնայած բնակչությանը հասցրած ահռելի վնասների՝ 2013 թվականի առաջին կիսամյակում հավաքագրվել է 1227822 դրամ հողի հարկ և 1058570 դրամ գույքահարկ:

ատարվել են բազմաթիվ աշխատանքներ.

. Բնակչությանը ՀՀ կառավարության աջակցությամբ 6000 դրամ արժեքով ժանվել է ազոտական պարարտանյութ՝ 78,5 տոննա:

Կարկտահարության հետևանքները վերացնելու նպատակով կառավարության ողմից որպես օգնություն հատկացվել են սերմացու և դիզվառելիք, որը մրողջությամբ բաժանվել է բնակչությանը:

Կազմվել են կարկուտից տուժած հողասեփականատերերի ցուցակներ և ամապատասխան կարգով ուղարկվել են մարզպետարան՝ հողի հարկի և ջրի արձի գումարներից ազատվելու համար:

. Կարմիր խաչի կողմից բնակչությանը հատկացվել է մարդասիրական գնություն:

Հորդառատ անձրևների պատճառով ճանապարհները խիստ վերանորոգման կարիք ունեին, կենտրոնական փողոցներում կատարվել են հարթեցման շխատանքներ:

. Խմելու ջրի խողովակաշարը կառուցված է 50-60-ական թվականներին, որը ունի երանորոգման խիստ կարիք: Բազմաթիվ տեղամասերում կատարվել են երանորոգման աշխատանքներ: Բնակչությանը տրվում է խմելու ջուր ռավոտյան ժամը 10.00-ից մինչև 16.00:

Համայնքում պարբերաբար կատարվում է աղբաթափման աշխատանքներ նվճար /շաբաթը մեկ անգամ/: Գյուղի սանիտարական վիճակը գտնվում է արվոք վիճակում:

. Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցները գտնվել են գյուղապետարանի նմիջական ուշադրության կենտրոնում և արվել են ֆինանսական օգնություններ, ոչ միայն վետերաններին, այլ նաև համայնքի անապահո բնակիչներին:

Անցկացվել է 6 ավագանու նիստ, որոնք պատշաճ ժամկետներում ուղղվել են մարզպետարան, իսկ բյուջեյում կատարված փոփոխությունները ուղարկվել է գանձարարության նախարարություն՝ փորձագիտական քննության:
Բնակիչներին տրվել են 300-ից ավել տեղեկանքներ և տարբեր բնույթի դիմումների պատճեններ:
Ժամանակին և պատշաճ կերպով զինկոմիսարիատի հետ անցկացրել ենք նակոչիկների կցագրման աշխատանքներ:
Վիճվարչություն է ներկայացվել նաև տարբեր բնույթի հաշվետվություններ, իսկ Ֆինբաժին և Գանձապետարան տարբեր բնույթի ֆինանսական հաշվետվություններ:
Հունվար ամսին երկու անգամ խորքային հորի նասոսը խափանվել էր արագ արագով կատարել ենք վերանորոգման աշխատանքներ և բնակչությանը կատարվել անխափան ջրամատակարարում;
Մանկապարտեզի աշխատանքները սկսվել են մայիս ամսից և մանկապարտեզ են հաճախում 55 երեխաներ, որոնց համար ստեղծվել են նորմալ պայմաններ
Երաժշտական դպրոցին տրվել է ֆինանսական աջակցություն:
Գյուղամիջում գտնվող խմելու ջրի խորքային հորի վերանորոգման աշխատանքները ընթացքի մեջ են և շարունակվում են:

2. Չնայած կատարված աշխատանքներին, համայնքում կան նաև չլուծված հիմնախնդիրներ.

Համայնքում չի գործում կուլտուրայի տունը, որը գտնվում է վթարային վիճակում:

Խիստ վնասված և քայքայված է խմելու ջրի ցանցը, որը ունի ամբողջովին փոփոխման կարիք:

Համայնքի ղեկավարի 2013 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությանը մասնակցում էր մարզպետարանի ներկայացուցիչ՝ Ա. Թովմասյանը:

Համայնքի ղեկավար՝ Կ. Հովհաննիսյան